## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 714

27 նոյեմբերի 2018թ.

ք.Էջմիածին

### ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքի Վ.Կոստանյան փողոցի թիվ 3 շենքի թիվ 2 բնակարանի բնակիչ Սաշա Բաբկենի Ներսիսյանը դիմել է Էջմիածնի քաղաքապետարան իրեն, Ամալյա Կառլենի Խաչատրյանին, Շոթա Սաշայի Ներսիսյանին, Արմենուհի Սաշայի Ներսիսյանին և Աննա Սաշայի Ներսիսյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք սեփականության վկայական թիվ 15042014-04-0003 տրված 15.04.2014թ./ Էջմիածին քաղաքի Վ.Կոստանյան փողոցի թիվ 3 շենքի թիվ 2 հասցեում գտնվող բնակարանի գործառնական նշանակությունը՝ հասարակականի, իսկ օգտագործման նպատակը խանութի փոփոխելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշմամբ.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Վ.Կոստանյան փողոցի թիվ 3 շենքի թիվ 2 հասցեում գտնվող բնակարանի գործառնական նշանակությունը բնակելիից փոփոխել հասարակական գործառնական նշանակության, իսկ օգտագործման նպատակը՝ խանութի, որը հնարավոր է առանց նախագծային փոփոխությունների:
2. Էջմիածին քաղաքի Վ.Կոստանյան փողոցի թիվ 3 շենքի թիվ 2 բնակարանը ոչ բնակելի տարածքի փոփոխելու կապակցությամբ հանել բնակարանային ֆոնդից:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՕՐԻՆԱԿ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 699

«22» հոկտեմբերի 2018թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Վ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 64Ա ՏԱՆ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՔՆԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՊԱՐԳԵՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածնի քաղաքապետարանի և Վ. Մամիկոնյան փողոցի թիվ 64ա տան բնակչուհի Քնարիկ Սարգսյանի միջև 13.09.2017թ. կնքվել է համաձայնագիր վերջինիս Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում ուսումնառության կուրսը ավարտելու համար կրթական պարգև հատկացնելու և համալսարանը ավարտելուց հետո 5 /հինգ/ տարի անընդմեջ քաղաքապետարանի ենթակայության տակ աշխատելու մասին:

Ելնելով վերոհիշյալից.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Էջմիածին քաղաքի 2018թ. բյուջեով նախատեսված «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» հոդվածի /հոդ. 4727/ միջոցներից 140.0 հազ. դրամ փոխանցել վերջինիս «Արարատ բանկ» ՓԲԸ-ի 1510002308480100 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ Թիվ 700

22 նոյեմբերի 2018թ. ք.Էջմիածին

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵԴԱ ՄՆԱՑԱԿԱՆԻ ԲԵՅԲՈՒԹՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 04.09.2018Թ. ԹԻՎ 514 ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոց փողոցի թիվ 142 տան բնակիչ Սեդա Մնացականի Բեյբության դիմումը պարզվել է, որ.

- համաձայն 29.05.1996թ. տրված սեփականության վկայագրի էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոց փողոցի թիվ 142 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Սեդա Մնացականի Բեյբությանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 80քմ, որի վրա կառուցված է բնակելի տուն, բնակելի նշանակության օժանդակ շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 300քմ սահմանազատված հողամաս, վերջինիս վրա նույնպես կառուցված են բնակելի նշանակության օժանդակ շինություններ, որոնց նկատմամբ ևս չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործնեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 07/09/2018թ. թիվ Կ-04/09/2018-6-0077 որոշումը և այն հանգամանքը, որ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև Օրենք/, 2-րդ հոդվածի դրույթներով թույլատրելի է մինչև 300քմ մակերեսով ավել օգտագործվող հողամասերի սահմանաչափը, ինչից շեղումը հանգեցնում է ավելի բարձր նորմատիվ իրավաբանական ուժ ունեցող ակտի՝ օրենքի հետ հակասության, գտնում եմ, որ պետք է անվավեր ճանաչել 04.09.2018թ. թիվ 514 որոշումը և կայացնել նոր իրավական ակտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի և նույն օրենքի 38-րդ հոդվածի պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անվավեր ճանաչել էջմիածնի քաղաքապետի 04.09.2018թ. թիվ 514 որոշումը:
2. էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոց փողոցի թիվ 142 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները և 300քմ մակերեսով հողամասը, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Սեդա Մնացականի Բեյբության /ծնված 00.00.1938թ./ սեփականությունը:
3. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով նախատեսված պայմաններին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 722

24 հոկտեմբերի 2018թ                                                                 ք. Էջմիածին

# ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 5 «ԳԱՐՈՒՆ», ԹԻՎ 13 «ԾԻԾԵՌՆԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ, Մ. ԵԿՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1, Ս. ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԵՎ Ե. ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ-ՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ԶՈՀՎԱԾ ԵՎ ՎԻՐԱՎՈՐ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ, ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ և 42-րդ կետերի պահանջներով, էջմիածին քաղաքի ավագանու 12.10.2017թ. թիվ 72 որոշմամբ ընդունված կարգով և հիմք ընդունելով 2017թ. նոյեմբերի 29-ի թիվ 9 նիստի թիվ 80 որոշումը «2018թ. էջմիածին քաղաքային համայնքի ենթակայության երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ներում ուսման վարձերի գծով արտոնությունների մասին» և թիվ 81 որոշումը «2018թ. էջմիածին քաղաքային համայնքի ենթակայությամբ գործող ՀՈԱԿ -մանկապարտեզներում երեխաների խնամքի համար գանձվող վարձավճարների», «Եղիշե Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում ուսման վարձերի գծով արտոնությունների մասին», ինչպես նաև հաշվի առնելով էջմիածնի քաղաքապետարանի Ընդհանուր, սոցիալական և առողջապահության բաժնի ուսումնասիրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել էջմիածին քաղաքային համայնքի ենթակայությամբ գործող մանկապարտեզներ, երաժշտական դպրոցներ և գեղարվեստի դպրոց հաճախող երեխաների խնամքի և ուսման վարձի համար գանձվող վարձավճարների գծով արտոնություններից օգտվող երեխաների ցանկը՝ համածայն Կրթության և մշակույթի բաժնի պետի կողմից 10.10.2018թ. զեկուցագրին կից ցուցակով ներկայացված թվով 26 երեխաների վերաբերյալ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝                                                                 Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ  ԹԻՎ 702

24 հոկտեմբերի 2018թ. — ք.Էջմիածին

### ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածնի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող /հիմք՝ ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշումը/ Սուրբ Մ.Խորենացի փողոցի թիվ 1 բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած, 0.06352հա մակերեսով բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը հասարակականից փոփոխել բնակելի կառուցապատման:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ — Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 703

24 հոկտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքի Վ.Մամիկոնյան փողոցի թիվ 57 տան բնակիչ Անդրանիկ Նիկողոսի Ինջիղուլյանը դիմել է Էջմիածնի քաղաքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի կողմից 12.03.1991թ. թիվ 3 արձանագրության քաղվածքը/ Էջմիածին քաղաքի «Վաղարշապատ» ԳԿՏ-ում գտնվող, 0,0815 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը ավելի բարձրարժեքի փոխադրելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշման պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի «Վաղարշապատ» ԳԿՏ-ում գտնվող, 0,0815 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը փոխադրել վարելահողի /3-րդ կարգ/:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 704

29 նոյեմբերի 2018թ. ք.Էջմիածին

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Ռուբիկ և Մանուշակ Սարգսյաններին պատկանող բնակելի տանը /հիմք՝ վկայական N 08102018-04-0008/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Ա.Մանուկյան 2-րդ թաղամաս թիվ 125 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 705

24 հոկտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

**ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Հռիփսիմե Սամվելյանին պատկանող բնակելի տանը /հիմք՝ սեփ.մատյան 5931/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Կոմիտասի փողոց թիվ 31/1:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 706

24 հոկտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

### ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Մարի Հովհաննիսյանին պատկանող հողամասին /հիմք՝ սեփ.վկայական 2125955/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Պետ.տնկարան 2-րդ փողոց թիվ 19 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 707

24 նոյեմբերի 2018թ. ք.Էջմիածին

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Արթուր Յունանյանին պատկանող /հիմք՝ սեփ. վկայական 2546491/ հողամասին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Չարենց 1-ին քաղամաս թիվ 812/2 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 708

24 հոկտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

### ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՒՐԵՆ ԳԱՐԵԳԻՆԻ ԱՅԴԻՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Լոմոնոսով փողոցի թիվ 24 տան բնակիչ Սուրեն Գարեգինի Այդինյանի դիմումը՝ պարզվեց, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 04.08.2018թ. տրված թիվ 4880 և 4881 սեղանամատյաններով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը/, Էջմիածին քաղաքի Լոմոնոսով փողոցի թիվ 24 հասցեում գտնվող 450քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Լոմոնոսով փողոցի թիվ 24 հասցեում գտնվող 450քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել՝ Սուրեն Գարեգինի Այդինյանի /ծնված 09.10.1956թ./ սեփականությունը:
2. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 709

24 նոյեմբերի 2018թ. ք.Էջմիածին

### ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՐՅՈԺԱ ՍԱՐԳՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Սերյոժա Սարգսի Խաչատրյանի լիազորված անձ՝ Ջուլետա Վանոյի Խաչատրյանի դիմումը պարզվեց, որ Սերյոժա Սարգսի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 24.10.1989թ. տրված տեխնիկական անձնագիրը/, Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկ /նախկին Զոյա/ փողոցի թիվ 4 հասցեում գտնվող 573քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա կառուցված բնակելի տունը և դրան կից կառուցված բնակելի նշանակության՝ օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկ /նախկին Զոյա/ փողոցի թիվ 4 հասցեում գտնվող 573քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա կառուցված բնակելի տունը և դրան կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Սերյոժա Սարգսի Խաչատրյանի /ծնված 02.12.1954թ./ սեփականությունը:
2. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Զորավար Անդրանիկ փողոց թիվ 4/1:
3. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 710

24 հոկտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

### ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՏԵԼԵՄԱԿ ԱՇՈՏԻ ԱՍԿԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Կամո փողոցի թիվ 6ա տան բնակիչ Տելեմակ Աշոտի Ասկարյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն 06.05.1996թ. տրված սեփականության վկայագրի, Էջմիածին քաղաքի Կամո փողոցի թիվ 6ա հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Տելեմակ Աշոտի Ասկարյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 530քմ, որի վրա կառուցված է բնակելի տուն, բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 10քմ սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված են բնակելի նշանակության օժանդակ շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Կամո փողոցի թիվ 6ա հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները /ծածկ 86,3քմ, ծածկ 15,8քմ/ և ավել օգտագործվող 10քմ մակերեսով հողամասը, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը համարել Տելեմակ Աշոտի Ասկարյանի /ծնված 01.05.1974թ./ սեփականությունը:
2. 9քմ մակերեսով հասարակական տարածքը համարել ինքնակամ:
3. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Կամո փողոց թիվ 6/1:
4. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով նախատեսված պայմաններին:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

### ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 711

28 նոյեմբերի 2018թ. ք.էջմիածին

### ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳԱԳԻԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 71ա տան բնակիչ Գագիկ Անդրանիկի Համբարձումյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն 25.03.1986թ. տրված տեխնիկական անձնագրի, էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 71 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Գագիկ Անդրանիկի Համբարձումյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 530քմ, որի վրա կառուցված է բնակելի տուն, բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 152քմ սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված են բնակելի նշանակության օժանդակ շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործնեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 71 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 152քմ մակերեսով հողամասը, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը համարել՝ Գագիկ Անդրանիկի Համբարձումյանի /ծնված 10.09.1937թ./ սեփականությունը:
2. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով նախատեսված պայմաններին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 712

26 նոյեմբերի 2018թ. ք.Էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Լոմոնոսով փողոցի թիվ 35ա տան բնակիչ Լևոն Բոյաջյանի լիազ.անձ Արմեն Բոյաջյանի դիմումը անշարժ գույքը բաժանելու մասին պարզվել է.

Էջմիածին քաղաքի, Երևան - Արմավիր խճուղու վրա գտնվող անշարժ գույքի մի մասը պատկանում է Լևոն Բոյաջյանին /հիմք՝ սեփ. վկայագիր տրված 14.12.1996թ./:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան » ԱՁ /վկայական թիվ 0244/ կողմից հաստատված հատակագծերը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Երևան - Արմավիր խճուղու վրա գտնվող անշարժ գույքի զբաղեցրած հողամասի 0.0065 հա մակերեսով մասին շինությունով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Երևան - Արմավիր խճուղի թիվ 83/1 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

### ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7/3

26 հոկտեմբերի 2018թ. ք. Էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Էդիկ Մկրտչյանին պատկանող 04-002-0090-0055, 04-002-0090-0056 և 04-002-0090-0058 ծածկագրերով հողամասերը շինություններով միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ ք. Էջմիածին, Ռ.Մելիքյան փողոց թիվ 1 - 2/2 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ